

ուագիրները պատրուտեց , այնպէս որ Դաշնակցութիւնը 1794ին ստիպուեցաւ օրէնք մը հրատարակել գրոց և արուեստական գործոց ջնջումը արգելելու համար : Երկու տարի առաջ՝ միայն մէկ անգամով , Վանտովի հրապարակին մէջ , 2000էն աւելի ձեւ-ուագիրներ և յիշատակարաններ այրած էին :

Ներկայ դարու մէջ՝ մեծ գրատան կից Շէրէն և տ'Օզիէ երկու սենեակներ աւելցան , և Լապրտուայեոի հաւաքումը , 100 , 000 հատոր , որ գլխաւորաբար գաղղիական յեղափոխութեան վրայ կը խօսին , 2000 հատոր Վոլգէրի և 1500 հատոր Մոն-դէյնի վրայ : Իսկ վերջի տարիներուս ամենէն աւելի թանկագին գնմանց մին է Աշպուրնամի հաւաքումը :

1855ին Ազգային մատենադարանը ընդ գրեանս և փոքր հրատարակութիւնս գրեթէ երկու միլիոն հատոր ունէր . ներկայիս միայն գրոց թիւը գրեթէ նոյն չափ է , և ամէն տարի 50 , 000 հատոր կ'աւելնայ :

ՈՒՍՈՒՄՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ



(Տես յ'էջ 838)

Փ. Մ. ՊՐՈՍԷ

25. Հայաստանի հին պատմութիւն ըստ սրբագիր և բնեռաքանդակ տառից . Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes hieroglyphiques et cunéiformes. Ընթերցեալ յ' 13 ապրիլ 1871 :

26. Երկու բնեռածէ արձանագրութեանց վրայ՝ զոր Ռուս-Հայաստանի մէջ գտաւ Գասթնէր : Տեղեկագիր Պրոսէ և Գիւնիք պարոնայց , հանդերձ Լէրշի մէկ յիշատակագրովը . Notice sur deux inscriptions cunéiformes, découvertes par M. Kästner dans l'Arménie russe. Rapport de MM.

Brosset et Kunik; (suivie d'un mémoire de M. Lerche). *Ընթերցեալ յՅ օգոստոսի 1862 :*

27. *Տեղեկագիր զանազան այբբենական և բևեռատառ արձանագրաց հաւարելոց ի ժիւլ Գասթնէր և յՍտոլֆ Պերկեր պարնայց, տախտակաւ մը.* Rapport sur divers inscriptions (alphabetiques et cunéiformes) recueillies par MM. Jules Kästner et Berger; avec un pl. *Ընթերցեալ ի 29 յունուար 1864 :*

28. *Երանօթութիւն ասիական մուսէոնին մէջ գտնուած քանի մի վրական դրամոց վրայ, և Թիպեղեան արձանագրութեան մը որ յ'Էջմիածին.* Note sur quelques monnaies géorgiennes, du Musée Asiatique, et sur une inscription thibétaine d'Edchmiadzin. *Ընթերցեալ ի 25 օգոստոսի, 1867 :*

29. *Մենագրութիւն մը հայկական դրամոց վրայ, երկու տախտակով.* Monographie des monnaies arméniennes; avec 2 pl. *Ընթերցեալ ի 20 հոկտ. 1837 :*

30. *Արեւելեան դրամական հաւաքման վրայ որ ի կայսերական մենարանին.* Collection numismatique orientale de l'Ermitage Impérial; 1852—1879. *Ընթերցեալ ի 24 սպրիլի, 1879 :*

31. *Ուղեգրութիւն մեծարգոյ եղբօր Աւգոստինոսի Բաճենցի, հայ եպիսկոպոսին Նախիջևանու ի կարգէ Քարողոյաց ընդ Եւրոպա.* Itinéraire du très révérend frère Augustin Badjetsi, évêque arménien de Nakhidchévan, de l'ordre des frères Prêcheurs, à travers l'Europe... Traduit... par M. Brosset jeune. (Journal Asiatique, 3<sup>m</sup> Ser. Tome III, 1837. p. 209—245, et 401—421):

32. *Վրաց պատմութեան սկզբնագիր աղբերաց վրայ : Հատուած Ա. Ժամանակագրութիւն Վախթանկայ : — Հին հայկական համառօտեալ Թարգմանութիւն : — Հատուած Բ. Համառօտ պատմութիւն Վախուչայ, մինչև ի հինգերորդ զար ֆրիստոսի.* Des sources originales de l'histoire de Géorgie. 1<sup>er</sup>. article. Chronique de Wakhtang. Ancienne traduction abrégée, en arménien. — 2<sup>e</sup>. article. Abrégé historique de Wakhoucht, jusqu'au V. s. de nôtre ère. (Journal de S. Pétersbourg, 1841). *Առանձին տպագրութիւն, յ' 39 էջ :*

33. *Տեղեկութիւն հայ գրչագրի մը վրայ, զոր Ակադիմիոյ ընծայեց պարոն Տըհանն, ծերակուտի անդամ.* Notice d'un manuscrit arménien offert a l'Académie par S. E. M. le Baron de Hahn, sénateur. *Ընթերցեալ յ'7 դեկտ. 1838 :*

34. *Առաջարկութիւն կամ մտածութիւն՝ դեռ եւս չհրատարակուած հայ պատմիչաց հաւաքման մը համար. Երկու հատուածք.* Projet d'une collection d'historiens arméniens inédits. Premier article. *Ընթերցեալ յ'30 հոկտ. 1840. — Second article. Ընթերցեալ ի 29 հոկտ. 1841 :*

35. Բննադատական վերլուծութիւն Վարդան վարդապետի Ընդհանուր պատմութեան: Առաջին տպագրութիւն Հայ բնագրին թարգմանութեամբ ի ռուս, ի ձեռն Մ. Էմին. Analyse critique de l'Histoire universelle de Vardan. Edition princeps du texte arménien, et traduction russe par M. N. Emin. Ընթերցեալ յ'7 մարտ 1862:

36. Երանօթութիւն տասներորդ դարու մատենագիր՝ Թովմայի Արծրունայ վրայ. — Notice sur l'historien arménien Thoma Ardzrouni, X. 8. Ընթերցեալ յ'12 դեկտ. 1862:

37. Երանօթութիւն Մխիթարայ Այրիվանկեաց Հայ պատմին վրայ. — Notice sur l'historien arménien Mkhithar d'Aïrivank. Ընթերցեալ ի 23 յունուարի 1863:

38. Սիւնեաց պատմութիւն Ստեփանոսի Ուսպելեան, թարգմանեալ ի Հայ բնագրէն ի ձեռն Պրուէի: — Ասայլև մասև. Պատմութեան Սիւնեաց գաղղիական թարգմանութիւն, ծանօթութեամբք: — Երկրորդ մասև, Ներածութիւն: — Բովանդակութիւն. 1. Պատմութիւն Սիւնեաց: Յօդուած Ա. Յառաջարան տեղեկութիւնք: — Բ. Նկարագրութիւն (համաստեալ թարգմանութիւն Ներածութեան ինծիճեան Հօր ի վերայ աշխարհին Սիւնեաց, ի գիրսն Ստորագրութիւն հին Հայաստանի): — Գ. Տոճմազարական ցուցակ իշխանաց Սիւնեաց. առաջին ժամանակ: — Դ. Սիւնեաց և Սիւսական իշխանք, ազգականք կրկին ցեղից, անծանօթ մնացած աստիճաններով: — Ե. Ազգագրական տախտակ Սիւնեաց իշխանաց և թագաւորաց. երկրորդ ժամանակ: — Զ. Նախընթաց ցուցակաց մէջ յիշուած իշխանաց, և անոնցմէ դուրս ուրիշ այլոց իշխանաց վրայ տեղեկութիւնք, ըստ պատմըաց Հայոց: — Է. Կրօնական պատմութիւնն, ըստ ինծիճեան Հօր: — Ը. Կարգ մետրապոլիտան Սիւնեաց (ըստ ինծիճեան հօր, Ստեփանոսի Ուսպելեան և Հասանջալ Սարգիս վարդապետի ի գիրսն Ճանապարհորդութեանն ի մեծ Հայս): — Թ. Տեղագիր Սիւնեաց աշխարհին (քաղեալ ի յտալաբանութենէն զոր ի գլուխ Պատմութեան գրոց նորա դրաւ Եանազար վարդապետ վարդապետ ի տպագրին Փարիզու): Թարգմանութիւն աշխարհագրական տեղեկութեանց Ալիշան Հ. Ղեւոնդ Վ. յիւրում Տեղագրին Հայոց մեծաց (տպ. ի վենետիկ. 1855), և ըստ կրկին երկասիրութեանց ինծիճեան վարդապետի: — Ժ. Ղարապաղ կամ Եուշի, ի Հ. Ղեւոնդեան Ալիշան: — ԺԱ. Վանորայք Հայոց. Վայոց ձոր (հեռուողութեամբ Ջալալեան Սարգիս վարդապետ յ' Բ հատորի ճանապարհորդութեանն ի մեծ Հայս): — ԺԲ. Վանորայք Գեղարքունեաց գաւառի. (ըստ Եանապարհորդութեանն ի գիրսն Ստորագրութեան սրբոյ Լէվիմանի). ԺԳ. Վանորայք Սոթք գաւառի, (ըստ Եանապարհորդութեանն սրբոյ Լէվիմանի). ԺԴ. Վանորայք Արցախ գաւառի, Խաչենից և Աղուանից: — ԺԵ. Համառու տեղեկութիւն Ուսպելեան Ստեփանոսի վրայ: — ԺԶ. Ազգագրական ցուցակ այն պիտաւոր տոճմից՝ որոց յիշատակութիւնն կ'ըլլայ նախեղեալ արևանագրութեանց մէջ:

Մասն Բ. Պատմութիւն Միւնեաց. Շարակարգութիւն անցից և դիպուածոց տանն Միսական, (Թարգմանութիւն Պրոսէի): — Ուղղութիւնք և Յաւելուածք: Histoire de la Siounie par Stéphannos Orbélian, traduit de l'arménien par M. Brosset. Première livraison. Histoire de la Siounie (traduction et annotations). — Seconde livraison. Introduction par M. Brosset.

39. Ուսումնասիրութիւնք ի վերայ Միսիթարայ Ալրիվանեցոյ, հայ պատմաբանի, յերեքտասաներորդ դարու: Մասն Ա և Բ. Յարարչութենէ աշխարհի մինչ ի սկզբնաւորութիւն քրիստոսական թուականութեան, — Մասն Գ. մինչ ի 1289 թուական Գրիստոսի. Etudes sur l'historien arménien Mkhithar d'Aïrivank, XIII s; I et II parties, de la création du monde au commencement de l'ère chrétienne; III partie. jusqu' en 1289. Ընթերցեալ ի 22 դեկտ. 1864, և յ'13 ապրիլ 1865.

40. Քննութիւն Ուխտանէս հայ պատմելին հատուածի մը՝ նկատմամբ ենթապրեալ ահրապետութեան աշխարհին վրայ ի Նաբուչոզոնոսոսոսոսոսոսոսոսոսոս. Examen d'un passage de l'historien arménien Oukhtanès, relatif à la prétendue conquête de l'Ibérie, par Nabouchodonosor. Ընթերցեալ ի 4 յունիսի, 1868.

41. Ուսումնասիրութիւն ի վերայ Սիստանէս հայ պատմելի տասներորդ դարու. — Etude sur l'historien arménien Oukhtanès, X s. Ընթերցեալ ի 5 նոյեմբ. 1868.

42. Միսիթարայ Ալրիվանեցոյ՝ ժամանակագրական պատմութիւն. դար ԺԳ. Թարգմանութիւն ի հայէ ի վերայ զըջագրի ասիական մուզէոնին, ի ձեռն Պրոսէի. Histoire chronologique par Mkhithar d'Aïrivank, XIII s. traduite de l'arménien, sur le manuscrit de Musée asiatique, par M. Brosset. Ընթերցեալ ի 22 դեկտ. 1864:

43. Ի վերայ պատմութեան թովմայի Արծրունեցոյ՝ մատենագրի ի տասներորդ դարու, Թարգմանեալ ի լեզու գաղղիական ի Պրոսէէ. Sur l'histoire en composée en arménien, par Thoma Ardzrouni, X s. traduite en français par M. Brosset. Ընթերցեալ ի 28 հոկտ. 1869.

44. Երկու հայ պատմիչք, Կիրակոսի Գանձակեցի յ' ԺԳ դարու, պատմութիւն Հայոց, և Ուխտանեսի Եղեսացոյ ի տասն դարու, պատմութիւն եռամասնեաց, Թարգմանեալ ի Պրոսէէ. Deux historiens arméniens; Kiracos de Gantzac, XIII s. Histoire d'Arménie; Oukhtanès d'Ourha. X. s. Histoire en trois parties, traduits par M. Brosset. Առաջին մասն տպագրեալ ի 1870, իսկ երկրորդն ի 1871:

45. Սամուէլ Անեցի և իր ժամանակագրական երկասիրութեան վրայ բնագնանոր տեսութիւն. Samuel d'Ani; revue général de sa Chronologie. Ընթերցեալ յ'12 հոկտ. 1871:

46. Զհայ պատմիչաց ԺԷ և ԺԸ դարուց. Առաքելի Գաւրիթեցոյ ժա.

մանակագրական գրութիւնը, թարգմանութեամբ և ծանօթութեամբք Պրոսէի : — Տեղեկութիւնք զՉաքարիայ սարկաւազէ կապոնց, որ հեղինակ է Սոֆի իշխանաց վրայ պատմական յիշատակարանի մը. Des historiens Arméniens de XVII et XVIII siècles. — Arakel de Tauriz; Régistre chronologique, annoté par M. Brosset. Ընթերցեալ յ'Յ1 հոկտ. 1872 : — Traduction et annotations. — Notice sur le diacre arménien Zakaria Gabontz, auteur des Mémoires historiques sur les Sofis, XV—XVII siècles. Ընթերցեալ յ'12 նոյեմբ. 1873 :

Շարայարեւի

Շ Ի Գ Ա Կ Ծ

**Յ**ախտեանական քաղաքին և արևմտեան այս շահաստանին մէջ շատ տարբերութիւն կայ. կ'ըսեն թէ Հաովմ մէկ օրուան մէջ չէ շինուած. իսկ Շիգակոյի համար ստոյգ է այս. Հաովմ եօթնաբլբանիստ է. ընդհակառակն Շիգակո իր կառուցման համար ստիպուեցաւ հող բերել և լեցնել : — Շատ ատեն չէ որ մեռաւ այն պատմական ծերուկը որ իւր աչքը տեսած էր ճախճախուսին քանի մը տանց և Chicauga բերդին միջև շարուած ցիցերը հետեւալ արձանագրութեամբ. « Զգուշանայի, վասն զի ծովը խոր չէ » :

Իննեւտասներորդ դարը իւր առաջին ամաց շրջանին մէջ, այժմեան Շիգակոյի տեղ՝ միայն ճախնային անպիտան երկիր մը գտաւ. բայց Միչիկան լճին ծայրը զտեսած այս կէտը՝ շատ օգտաւէտ և յարմար էր Գանատայի հետ վաճառակցութեան համար, և Ասգորի ընկերութիւնը, որը կեդրոնական տունն էր 'ի Մաքինաւ, աստ առեւտրական կայարան մը հաստատեց մորթի վաճառակախութեան համար. և այս հաստատութիւնը Հնդկաց ծովային արշաւանքներէն պաշտպանելու համար՝ անմիջապէս մօտը բերդ մը շինուեցաւ, որ նոյն ժամանակ Fort Dearborn կոչուեցաւ. Բայց 1812ին այս բերդին պահանքորդ գունդը՝ բովանդակ շարդուեցաւ. կոտորածիւն կնձնիւն՝ ցայսօր Գեորգ փուլմանի շքեղ պալատին զեղեցիկ դարաստին մօտ մարգագետնի մը վրայ կը ցուցնէ մեզ այս բերդին ճիշտ դիրքը :

Այս անգութ դէպքին վրայ չորս տարի անցաւ՝ և սպիտակք դեռ չէին համարձակեր առաջ գալ. մինչև որ վերջապէս Հնդիկը 1816ին այժմեան Շիգակոյի մօտ փառքիկ երկիր մը թողուցին իրենց : Բերդը կրկին շինեցին և դարձեալ պահպան գունդ մը ձգեցին, և կամաց կամաց անձանութ անձանց փոքրիկ խումբ մը ձևացաւ անդ, որ կը ստանային 'ի Հնդկաց կենդա-